

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի

Առանձին համարները 7 կոպեկով

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлисть. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարությունները համար վճարում են
խրաքանչիւր ըստ ին 2 կոպեկի

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Դարձեալ երգման հարցի մասին. — ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենադարանին. Նամակ Բաթումի
միջ. Նամակ Նոր-Բայազետից. Նամակ Խմբագրին.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիբեր-
քիա և իր արար հպատակները. Նամակ Պարս-
կաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՄԱ. — ՅԱՅՏԱ-
ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴԱՐՁԵԱԼ ԵՐԴՄԱՆ ՀԱՐՅԻ ՄԱՍԻՆ

Մի ոմն պ. Տօկարսկի բանակում է
«ԵՎԿԱՅԵ» լրագրի էջերում (№ 184), մեր
լրագրի № 74-ի մէջ տպւած «Երբման
հարցը» վերնագրով առաջնորդող յօդուածի
դէմ: Մեր պատասխանը, որքան հնար է
մեզ, կարճ կը լինի:
Նախ, պ. յօդուածագիրը չէ ուզում հաս-
կանալ, որ մեր խօսքն ամբողջ մեծամասն-
ութիւններ, մասնաւոր չպատկանող, ճշը-
մարիտ հաւատացող վիճակի մասին է: Օ-
րէնքը, շատ լաւ հասկանալով, որ այդ
կարգի մարդկանց համար, որոնք ամեն
տեղ և կազմում են ժողովրդի մեծամասն-
ութիւնը, երբեմն պարտաւորեցողիչ-բա-
րոյական նշանակութիւն կունենայ միայն
այն ժամանակ, երբ նա կրօնական եւ-
րոպական կը լինի, — և մտքով է այն խելա-
ցի յօդուածը, թէ ամեն մարդ պէտք է
կրօն իր դաւանութեան ծէսերին համե-
մատ: Իսկ ծէսի հետ անբաժանելի կրօն-
կապուած է և և այն լեզուն, որով նոյն եկե-
ղեցու բոլոր ծէսերն են կատարվում, կամ
այն լեզուն, որով մարդը մանկութենից
սովորել է աղօթել:

Երեւակայեցէք, որ մի ուրիշ, ուղղափառ,
ճշմարիտ հաւատացող մարդուն, որն ընտե-
րացի է այն մաքրին թէ իր եկեղեցու բո-
լոր կրօնական արարողութիւնները կատար-
վում են սլավոնական լեզուով, իսկ իր տան
աղօթքները նա իր մանկութենից միշտ
սովորել է ուսուցանել լեզուով արտասանելի,
— սլավոնական երգում տալ դիցուք զերմանե-
րէն լեզուով (ընդունելով որ նա պատահմամբ
զիտէ այդ լեզուն), և մենք կատարելապէս
հաւատացած ենք, որ այդ ուրիշ, ուղղա-
փառ մարդը, երբեմն տալով իր համար
մի օտար լեզուով մի լեզուով, որով ին-
քն սովոր չէ իր եկեղեցական արարողու-
թիւնները կատարելու, անհնար, որով սովոր
չէ աղօթել, — երբեմն ժամանակ ոչ թէ
միայն չի ներշնչել երգման սրբու-
թեամբ, այլ և սրտում հաւատացած էլ
կը լինի, որ մեծ մեղք է գործում Աստու-
ծու առջև, որ չէ երգում այն լեզուով,
որով սովոր էր պահպանել իր բոլոր յարա-
բերութիւնները Աստուծու հետ:

Եթէ դուք, պ. Տօկարսկի, իրաւաբան էք,
թող տուեցէք մեզ, որպէս անկողմնապահ
և ուսումնական իրաւաբանի հետ պարզ
խօսել. մի բայէ երկուստ միմեանց անկեղծ
կրկնով, ուղիղ երեսին նայելով և խոստո-
վանքներ, որ օրէնքն ու դատարանը,
արդարադատութեան աւելի հաստատ
կերպով հասնելու համար՝ օգտվում են
կրօնական երգումից, որպէս զի ա-
ւելի մեծ բարոյական ճիշտում գոր-
ծին վրայի խղճի վրա, նրան պարտաւորեց-
նում համար գուտ ճշմարտութիւնն ասե-
լու...

Վկային երգիցնում են աւետարանով,
խաչով ահեղ դատաստանով, Աստուծու ա-
նունով համբուրել են տալիս խաչն ու ա-
ւետարանը, — և որովհետեւ հաւատացող
մարդը ճշմարիտ կը ներշնչվի երգման
սրբութեամբ միայն այն ժամանակ, երբ
երգումը իր դաւանութեան ծէսերին համե-
մատ կը կատարվի (քանի որ դեռ ևս դո-
ւութիւն չունի և երբեք զոյգութիւն չի

ունենայ պ. Տօկարսկու ցանկացած՝ ընդ-
հանուր և միացած քրիստոնէական եկեղե-
ցին), ուրեմն երգումը միայն այն ժամա-
նակ մարդու համար պարտաւորեցողիչ
բարոյական նշանակութիւն կունենայ, երբ
այդ երգումը կը կատարվի իր եկեղեցական
ծէսերին համեմատ, իր եկեղեցուն պատ-
կանող քահանայի ձեռքով և այն լեզուով,
որով այդ նոյն քահանան կատարում է իր
եկեղեցական, կրօնական բոլոր միւս արա-
րողութիւններն էր:

Գանք այժմ, քաղաքացիական երգ-
ման հարցին: Չենք կարող չը դարմանալ,
որ պ. Տօկարսկի, իրան իրաւաբան ցոյց
տալով, չէ հասկանում որ Առաքանական
զոյգութիւն չունի քաղաքացիական երգ-
ումը, այլ զոյգութիւն ունի միմիայն
կրօնական, եկեղեցական երգումը: Եթէ այդ-
պէս է, ուրեմն մի դաւանութեան պատկա-
նող մարդուն ինչպէս էք ուզում ստիպել
որ նա իր եկեղեցական երգումը կատարէ
մի այլ դաւանութեան լեզուով: Ուրիշ բան
է, երբ օրէնքով երգումը քաղաքացիական
կան զործողութիւն, քաղաքացիական ակա-
կը հրատարակվի. այն ժամանակ երգման
կատարումը կարող է պետութեան բոլոր
հպատակներին համար պարտաւորեցողիչ
դառնալ պէտք է և և իր լեզուով: Բայց բանը
զրանում է, որ որպէս իրաւաբան, պ.
Տօկարսկի չէր կարող չը հասկանալ որ
կրօնական և քաղաքացիական երգ-
ման մէջ զանազանութիւնը ահապէս է և
կայանում է թէ ձեռի, Ֆորմուլայի մէջ, և
թէ բովանդակութեան, իմաստի, բնաւորու-
թեան ու նոյն իսկ կոչումը ահապէս
տեղեկացնելով մէջ... Իսկ դրանով որ այս
ինչ դաւանութեանը պատկանող քահանայի
բացակայութեան դէպքում օրէնքով դատա-
րանի նախագահին է թողնուած վկային
երգիցնելը, դրանով օրէնքը չէր կարող
նպատակ ունենալ կրօնական երգմանը՝ քա-
ղաքացիական բնաւորութիւն յատկացնելու,
որովհետեւ դրանով երգումը կրօնական
նիւց չէ դառնում քաղաքացիական,
քանի որ կրօնականի ու քաղաքացիականի
մէջ զանազանութիւնը այն բանի մէջ չէ
կայանում թէ քահանան է երգիցնում
վկային կամ աշխարհականը, այլ կայանում
է նոյն իսկ երգման հիմնական սկզբունք-
ները որոշող, քաղաքակրթական կենսի
աւելի կամ պակաս զարգացած պայմաննե-
րից բխող՝ ձեռի, Ֆորմուլայի մէջ:

Մինչդեռ եկեղեցական երգման Ֆորմուլան
հիմնական է այն խոստման վրա, որ մարդն
անում է Աստուծուն, երգում է Աստու-
ծու, աւետարանի, խաչի, ու ահեղ դա-
տաստանի անունով համբուրում է խաչն
ու աւետարանը (խաչի նշանն էլ թէ և
լուս, առանց այս կամ այն լեզուով մի
բառ արտասանելու, անում է իր կրօնական
ծէսին համեմատ) — քաղաքացիական երգ-
ման Ֆորմուլան կայանում է այն խոստման
մէջ, որ մարդն անում է իր անձնա-
կան խղճի և պատիւի զգացմունքի վրա:
Իսկ դրանով որ դատարանի նախագահը
(այն էլ օրէնքով միայն քահանայի բացա-
կայութեան դէպքում) ինքն երգիցնում է
զիցուք հայ-լուսաւորչական վկային, դար-
ձեալ աւետարանի, Աստուծու անունով ու
ահեղ դատաստանի երկրպագ, միայն փո-
խանակ հայերէնի, ուսուցանել լեզուով —
դրանով կրկնում ենք, կրօնական երգումը
չէ փոխում իր բնաւորութիւնը և կրօնա-
կանից չէ դառնում քաղաքացիական եր-
գում, այլ միայն կորցնում է իր ծիսական
ամբողջութիւնը:

Ուրեմն, եթէ այդպէս է, մինչև որ մեզ
մօտ, Առաքանական երգման ընդունված
միակ Ֆորմուլան կրօնական կը լինի, —
ամեն մարդ պէտք է երգի իր դաւանու-
թեան ծէսերին համեմատ, իսկ կրօնական
ծէսի հետ (թէ և ուղի այդ ծէսը պէտք է
պէս խորհուրդ էլ չը համարվի) անպայ-

ման կապուած է և այն լեզուն, որով դա-
րեւից ի վեր կատարվում են նոյն դաւա-
նութեան բոլոր ծէսերը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆԵՐԻՆԵՐԻՆ

«НА РАЗВѢТѢ» Т. ЕЖЕ.—[ԻՌՍՏԱՒԻՒՄԻՆ]
Տ. ԵԺ. (Խմբագրություն).—Մօսկվա, Միւրտի
Բարխուդարեանի տպարան, 1891 թ. 570 էրես.
—Վերջ 1 ռուբլի:

Անցեալ տարվայ ընթացքում, ուսու «Вѣст-
никъ Европы» ամսագրում տպւած էր յայտնի
ուսու դուր Տ. ԵԺ. վէպը «На Развѣтѣ» վերնա-
գրով, որի նիւթը վերցրած էր բողոքական
կենսից: Այդ վէպը, ինչպէս ինքն հեղինակն ա-
սում է իր առաջաբանի մէջ, վերաբերում է Բո-
ղոքային վերածնութեան ժամանակակից շրջա-
նին, այս պատճառով էլ հեղինակը ստիպված է
կրկն, օգուտ քաղելով պատմութիւնից, որքան
հնար էր, ճշգրիտ կերպով դուրս բերել յայտնի
պատմական ժամանակամիջոցի վիճակը: Վէպի
մէջ գործող անձինքներից մի քանիս պատմական
տիպեր են, ծնված այն պայմաններին մէջ, որոնց
չնորսով վարուց արդէն մոռացութեան տուած
սպիտակաբոյն նորից հանդէս է դալիս քաղաքա-
կան կենսիցում:

Այդ վէպի մէջ գործիչներն և տեղերն անուն-
ները փոփոխված են: Հեղինակը կամեցել է
միայն պահպանել տեղական դոյնը, պատկերաց-
նելով մի ամբողջ պատմական շրջանի ներքին
կողմը: Հեղինակը խնդրում է իր ընթերցողին, չը
որոնել իր վէպի մէջ ոչ պատմութիւն և ոչ էլ
երեւակայութիւն, այլ նայել վէպի վրա, որպէս
այն շարժման ընդհանուր նկարագրութեան վրա,
որը տեղի ունեցած բողոքական աղիւ մէջ իր
հինգ զարկով խոր քննից արթնանալու լուսաբա-
ցին:

Մենք յիշում ենք թէ ինչ տեղային հետաքը-
րութեամբ ուսու հասարակութիւնը հետեւում էր
պ. ԵԺ. վէպին, որը մաս մաս տպւում էր ամ-
սագրում և ամսագրի իւրաքանչիւր տեսակում
հետեւեալ բաց էր անում ընթերցողի առջև մի
ամբողջ աղգային դրամայի զարգացումը... Մինչ-
դեռ միւս պատկան աղբիւր արդէն աղաքած
էին մասնատական արեւակտութիւնից, բողոքա-
կան աղբիւ, հետեւելով իր աղգային սլավոն միւս
աղբիւրի օրինակին, թէ և ոչ, բայց հաստատ
քաղելով սլոնց նմանապէս մտածել իր աղաքու-
թեան դրոյի վրա:

Սկզբից այդ քրիստոնէայ ժողովուրդը, որը
հինգ հարիւր տարի շարունակ մասնատական ար-
եւակտութեան տակ մնալով, ընտելացել էր
ստորութեան վիճակին, չէր էլ ուզում հետեւել իր
շրջանում ծնված առաջնորդներին, բայց հետ-
դեհեալ սկսեց ըմբռնել աղաքութեան զարգացումը
և ամբողջովին օտի կանգնեց, հետեւելով այն իր
առաջնորդներին, որոնց սկզբից ինքն էր հալա-
ծում:

Վէպի պրոդրամը լաւ է կազմված, գրված է
նա հետաքրքրաշարժ կերպով և այդ պատճառով
էլ կարգացվում է մեծ յափշտակութեամբ: Անց-
քերը, հոգեբանական տեսակետից, տեղ տեղ
սրտաշարժ են նոյն իսկ:
Խմբագրութեան մասին մենք շատ քիչ ու-
նենք ասելու: Հայ խմբագրութիւնը, խոստովանում
ենք, իմացել է պահպանել ոճի թիւթութիւնը,
լեզուի զերամարս ձեւը... Հայերէն լեզուով էլ
Վ. ԵԺ. արդարեւ վէպը նոյնքան հետաքրքրութեամբ
և յափշտակութեամբ կը կարգացվի, որքան և
ուսուերէն լեզուով էր կարգացվում:

Միայն խմբագրութեան քերականական ձեւերի
մէջ մենք նկատեցինք անհաստատ կանոններ,
անյայտորութիւն և հակասութիւններ:

Կը բերեց այստեղ մի քանի օրինակներ ցոյց
տալու համար թէ որքան անհարթ է խմբագրու-
ղի լեզուն:

Յայտնի է որ հայերէն այն բայերը, որոնք ալ
վերջաւորութիւն են կրում, ինչպէս ժպտալ, որ-
սալ, սողալ և այլն, անցեալ ժամանակի երրորդ
դէմքում ընդունում են՝ ժպտաց, որսաց, սողաց
ձեւ: Վէպի խմբագրութիւնը գործ է ածում սխալ
կերպով ժպտաց անտանելի և անկանոն ձեւ:
Ընդհակառակն ասել բայից նա շինում է ա-
սաց ձեւը, որը նոյնպէս անկանոն և սխալ է,
այլ պէտք է լինի ասաց, քանի որ բայի արմատն
է ասել և ոչ թէ ասաց: Սակայն դա մեր գրեթէ
բոլոր խմբագրութիւնների յատկութիւնն է՝ գրել ա-
ռանց մտածելու, какъ Богъ на душу поло-
житъ...

Թանգ բառը խմբագրութիւնը գրում է թանկ,
մէկ տեղ ասում է կը խօսեմ, մի այլ տեղ՝ կը
խօսինք և այլն...

Կամ դա ինչ ոճ է. «Պատահեցրը սիրում են
ուրիշը որդկերանց, ինչպէս իւրեանցիկ» (ե-
րես 145):

Խմբագրութիւնը մեր բոլոր գրողներին պէս անում
է և այն սխալը, որ բոլոր բառը գործ է ա-
ծում ամբողջ բառի տեղը: Չեն ուզում հասկա-
նալ որ բոլոր բառը յոգնակի է, կամ հաւաքա-
կան, իսկ ամբողջը՝ կապի է:

Անտանելի է նմանապէս երբ թւական անունը
յոգնակի է, իսկ զոյականը մնում է կապի, օր-
նակ՝ քան երկուստադ, փոխանակ քան՝ երկ-
ուստադներ, և այլն:

Իսկան բայերի մէջ բոլոր ժամանակակից հայ
գրողներին յատուկ հակասութիւն է նկատուում:
Նոյն (զիցուք 553) երեսի վրա կական բայը բա-
ցասական մասնիկն ընդունելով՝ մէկ տեղ գործ է
ածվում չէ ձեռք միւս տեղ չի ձեռք. օրինակ
հա յիմար չէ, իսկ յետոյ հա չի կարող՝ և
այլն:

Սակայն լեզուի անհարթութիւնն ու հակասու-
թիւնները թողած չենք կարող չը խոստովանել,
որ ընդհանրապէս խմբագրութիւնը վատ չէ:
Նիւթն էլ այնքան հետաքրքիր է, որ չենք կարող
մեր ընթերցողներին չը հրաւիրել՝ առնել այդ
գիրքն ու կարդալ: Հաւատացած ենք, որ առնող-
ներից ոչ մէկը փոշմանվելու չէ, որ մի բուբլի է
վճարել գրողաճառին:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՑ

Յուլիսի 3-ին

Ցախտակի վրա մաքս դրվելուց յետոյ երէկ
Բոստոնի համար այդ ապրանքով բարձրված առա-
ջին շոգնաւորը Բաթում հասան: Այժմ հարցը
դրա մէջն է, թէ մաքսատունն ինչ կերպով կա-
րող պիտի լինի պուլին 6 կոպեկ մաքս առնել
տախտակներից, մինչդեռ նրանց քաշելու ոչ մի
հնարաւորութիւն չը կայ: Միաժամանակ ստաց-
ված մի քանի շոգնաւոր դատարկելու և կշռելու
համար՝ շաքարներ, չեմ ասում դեռ ամիսներ,
և հարկւար որ մշակների աշխատանք է պէտք.
դեռ չը հաշւած, որ ծովափի վրա ոչ մի այնպի-
սի յարմարաւոր տեղ չը կայ, որ միանգամից
տանել կարողանայ տախտակի այդքան մեծ քա-
նակութիւն, չը հաշւած, որ այստեղ անձրային
օրերը գուցէ աւելի շատ են քան պարզ օրերը,
որ շոգնաւոր կապիտանը բեռը որոշած ժամին
չը դատարկելուց յետոյ, իրան սպասած ամեն մի
օրվայ համար ապրանքատիրոջ 500 ռուբլու
մօտ տուգանք է ստանում:

Քանի որ քաշելու հարկաւորութիւն չը կար,
գործարանատէրը տախտակները շոգնաւոր անել
էր տալիս սեփական կամ վարձած մեծ նաւա-
կներին մէջ և ուղղակի գործարանն էր տանում ու
բոլորած տեղերում դեռեղեղու. սակայն, եթէ
հարկաւորութիւն լինի կշռել, այժմ տախտակը
նախ և առաջ պիտի նաւերից ափ դուրս

բերվի, այնտեղից նորից նաեւրն անվերապա և գործարան տանելու համար. հարկաւորութիւնն չը կայ բացառելու թէ որքան թանկ կը նստի այդ գործարանատէրերի համար, և որքան անխնայ կը փշանայ այդ տեղափոխութիւնները ժամանակէն իսկ:

Բոտլիլի համար ստացված շոգնաւորները սպասում են դեռ ևս առանց զատարեկելու իրանց բեռները, որովհետեւ նոյն իսկ ինքը մաքսատուներ չը գիտէ թէ ինչ կերպով մաքս պիտի ստանայ այդ ապրանքից, ուստի թէ Բոտլիլի հաւատարմատարը և թէ մաքսատան վարչութիւնը զիմուք են հեռաւորով մինիւտրին, մի որչափ պատասխանատւանքով: Ապրանքատիրոջ ցոյց տուած քաշով եւ չէմ կարծում, որ մաքսատուներ համաձայնի մաքս վերցնել, որովհետեւ ոչ մի դժուարութիւն չը կայ ապրանքի քանակութիւնը շատ պակաս ցոյց տալու խնայանքից. մնում է միայն մի կէտ, որը շատ հաւանական է. որ կընդունվի, այն է, որ ապրանքը արտադրանքն ունի բարձրիւն այնտեղի ուսուցող հիւպատոսարանը. կոնսումմիտումը ցոյց տուած քաշի ճշդութիւնը ստուգել և վաւերացնել:

Թէ այսպէս և թէ այնպէս տեղական բոլոր գործարանատէրերը անհամբեր սպասում են, թէ ինչ կը կոնկրետայ այդ բոլորը և ինչպիսի կարգադրութիւններ կը լինեն:

Երեք օր առաջ տեղական բոլոր գործարանատէրերը, Բոտլիլի հետ միասին, մի ընդարձակ, 1,600 բաւոյթ բաղկացած հեռագրով դիմեցին մինիստրութեանը, խնդրելով որ տախտակի վրայ յայտ մաքս վերցնել, որովհետեւ այդ ապրանքը Ռուսաստանի մէջ չէ մնում, այլ կրկին դուրս է տարվում դէպի արտասահման. դրա փոխարէն նրանք խնդրում էին, որ մաքսի չափով, իրանցից տախտակը ստացվելու, ապահովութիւն առնվի, որը կրկին վերադարձնվի իրանց, երբ մաքսատուները կը ստուգեն, որ խնայանք այդ ապրանքը կրկին յետ է տարված, ինչպէս այդ անում է մաքսատուներ թիֆլիզի վերաբերմամբ: Յիշել էին նոյնպէս, որ Ռուսաստանի տախտակը, թէ և իրանց գործարանատէրերը ցանկութիւն ունենային էլ գործածել, չէ կարող երբեք բաւականութիւն տալ տեղական պահանջին, մանաւանդ ձմեռը, երբ Ռուսաստանի գետերը սառած են լինում, և ոչ մի հնար չը կայ այդ ապրանքը ստանալու:

Թէ ինչպիսի կը վերջանայ այդ բոլորը, կը հաղորդեմ մի այլ նամակով:

Ար. Ապ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ

Յուլիսի 3-ին

Այս քանի շաբաթ է, որ կարկտախառն անձրևները մեզ սարսափելի երկնքի և մտատանջութեան մէջ են գցել: Այդ անձրևները տեղում են անընդհատաբար: Թէ և այս քանի օրս անձրևները պակասել են, բայց եղանակի անբարեխառն լինելը անախորժ և յուսահատեցնող տպաւորութիւն է թողնում մեզ վրա, կրկին գցելով մեզ երկնքի մէջ: Երբ մարդիկ պատում են, որ այս տեսակ կարկտախառն անձրևները չեն տեսել իրանց ութսունամեայ հասակի ընթացքում:

Այդ անձրևները, կարկտախի հետ խառն, որոնք վերջ է վերջոյ սարսափելի հեղեղներ գոյացրին, վնասեցին քաղաքից ոչ հեռու գտնվող բոլոր արտերին, որոնցից հոնձ սպասելու. այլ ևս յոյս չը կայ: Արտերը՝ բացի կարկտահար լինելուց, մի և նոյն ժամանակ արմատախիլ էլ եղան: Կարկտի հատիկներից խրաբանչիւրը կշռում էր մօտ քառորդ ֆունտ...

Այնպիսի մի սարսափելի հեղեղ էր անցնում քաղաքի միջից, որ մարդիկ մտածում էին միայն իրանց գլուխը վտանգից ապաստելու: Ահալի հեղեղը բերում էր իր հետ ահազին ժայռեր, գերաններ և տակաւներ, ջրատոյդ էր անում տանակներով եղջիւրաւոր անասուններ, քանդում էր անիւ և խանութներ, ոչնչացնում էր ջրաղացներ և հեղեղում էր բանջարանոցներ ու մարգագետիններ, այդպիսով անթիւ աւերումներ պատճառելով: Հեղեղը տարաւ իր հետ և երկու կամուրջներ, որոնց վրայով մարդիկ դաշտից անցնում էին դէպի քաղաքը: Այժմ ջրով են անցնում ձիւր հեծած: Քաղաքիս չխաչերի՝ անուանված թաղի բնակիչների վնասները շատ մեծ են. իւրաքանչիւր տանից 6—7 եղջիւրաւոր անասուններ ջրատոյդ կղան, բայց արանից հեղեղը քանդել և ոչնչարի փարախներ ու յարդանոցներ, որոնք գլուղացու համար, ի հարկէ, մեծ նշանակութիւն ունեն: Նոյն տեսակի դարհուրելի հեղեղ

այցելեց և Քոստա-Մամա գիւղը, որը Նոր-Բայադէտից մի վերստաշափ հեռավորութեան վրա է գտնվում: Հեղեղը ծածկեց բոլոր արտերը, որոնք թշուառ գիւղացու ապրուստի միակ աղբիւրն էին, ապա քանդեց շատ տներ, տարաւ եղջիւրաւոր անասուններ, վերջապէս մի տանից երկու եղբայրներ և մի այլ տանից երկու աղաներ ջրատոյդ կղան. նրանց գիւղիները գտնվեցան ջրի մակերևոյթի ցածանալուց յետոյ:

Միայն Նոր-Բայադէտ քաղաքին, չը հաշվելով գիւղերը, հեղեղի տուած վնասը հասնում է 50 հազար բուրլու:

Հ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Արդուին, յուլիսի 6-ին

Երկրորդ գրութեամբ յարգելի ընթերցողներին ուղարկելով ինչ որ հրաւիրում Արդուինի թէ և փայլուն, բայց նիւթապէս խեղճ երկսեռ զարդերի վրա:

Երեք տարին լրացաւ, ինչ որ Արդուինում ունեցեց կանոնաւոր ծխական երկսեռ զարդեր, որոնք կառավարվում են երկրորդ մոմալաճառութեամբ, կառավարների եկամուտով, աշակերտների և աշակերտահիւնների թոշակադրամներով և մասնաւոր անձանց՝ նուէրներով: Առաջին տարին, երբ միայն ունէին երկու ուսուցիչներ, հաղել կարողանում էին զարդերի ծխական աւանի մեր ունեցած եկամուտով: Երկրորդ տարում, թէպէտ և բնականաբար զարդերի ծխական աւանը, բայց հայոց Բարեգործական ընկերութեան 300 բուրլի նպաստով և մի քանի անձանց նուէրներով կարելի եղաւ մինչև անգամ ծխականի վրա 263 բուրլի աւանդել: Իսկ երրորդ տարում, երբ աւելի մեծ ծխական ունեցանք և չունեցանք ոչ մի կողմից մի նուէր և ոչ վերջորեալ անձանց օգնութիւնը, ուստի և չը բաւականացաւ մոտքն եղին և այժմ 130 բուրլի 22 կողմ. պարտք ունեն զարդերիս:

Իսկ զարդի ունեցելու տարվա համար, որ ոչ անցնալ տարվա պէս 263 բուրլի 22 կ. աւելացած փող ունենք, այլ 130 բուրլի պարտք և թէ այս տարի անհամեմատ աւելի ծախս է պահանջվում, այս պատճառով հողաբարձութիւնս մի ժամանակ չուարված էր մնացել և չէր կարողանում որոշել իր անկիւրը, բայց տեսնելով որ անկարելի է 140-ի չափ անմեղ մանուկներին զրկել ուսումից, և յոյս դնելով մատաղ սերնդի դաստիարակութեան նախաձեռնողի մեծահոգի պարտքների վրա, որոշեց առաջնիկայ տարում շարունակել զարդերի պահպանելը: Այժմ 60-ի չափ աղքատ աշակերտներ և աշակերտահիւններ բերանով հողաբարձութիւնս խնդրում է բարեգործական հիմնարկութիւններից և հայ հասարակութիւնից օգնել տեղիս զարդերի խեղճ և անկեղ վրձնակն:

Դարձել 1890/91 ուսումնական տարվա հաշվարկները ընթերցողը կը տեսնէ «Մշակի» յայտարարութիւնների բաժնում:

Այն բարեխիղճ անձերը, որոնք կը կամենան օգնել մեր զարդերին իրանց նուէրներով, խնդրում ենք ուղարկել ուղղակի մեզ հետեւալ հասցեով. Артыинъ, Попечительству Армянно-Григорянскихъ церковно-приходскихъ училищъ.

Անգամ և զանապաճ հողաբարձութեան՝ Միւրտի Աղաւորեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՐՔԵՐ

Խնդրում ենք մեր ան բաժանորդներին, որոնք փոխում են իրանց հասցեն՝ յիշել նամակում թէ մինչև այսօր որտեղ էին ստանում լրագիրը և ճիշդ կերպով գրել նոր հասցեն: Բացի օրանից հասցեն փոխելու ժամանակ պէտք է ուղարկեն խմբագրութեանը 4 հատ 7 կողմեկանոց մարկաներ:

ԲԱՐԿԱՆԱՐԱՐՈՅ ԳԻՒԼԵՅԻ մեզ գրում են, որ յուլիսի 8-ին, ժամը 3-ից 10 րոպէ անց, երկինքը յանկարծ մթնեց, սկսեց կայծակ ու որոտումը և ապա տեղաց կարկուտ, որը մեծ ընկողիչ չափով էր և տեղեւ շարունակ 15 րոպէ: Այնուհետև սկսեց զայ անձրև, որը մօտ մի ժամ տեղում, զոյացրեց կատարեալ հեղեղ: Ոչ արտ մնաց, ոչ մրդի և խաղողի այգի, ամեն բան ամայացաւ, մերկացաւ: Գիւղում տիրում է ընդհանուր սուգ: Այս տարվա առատ պտղաբերութիւնը մի անգամից կորաւ: Սարերից էլ սկսեւ բերում էր

գումշներ ու եղներ: Ասում են որ գտնվեցան մարդկանց, կանանց ու մանուկների դիակներ էլ Թալա գիւղի մօտ և Ալաւտաֆա գետի ափերում: Այսպիսի սարսափելի կարկուտ և տեղաւ, աւելացնում է թղթակիցը, ոչ տեսել ենք, ոչ էլ լսել... Նկարագրել անկարելի է թէ հետեւեալ օրը ինչ յուսահատ գրութեան մէջ էր գիւղացիներ... Զեռքերը ծոցում դրած՝ դէպի երկինքն էր նայում, նախախնամութեանն ապաւինելով:

ԴՈՒՆԵԹԻՑ մեզ գրում են. «Քանի մի օր առաջ Մուլիւրան գիւղում երկու հայեր մի չնչին բանի համար սկսում են վիճել իրար մէջ և շուտով վեճը հասնում է կռախ: Կռուցիներից մէկը հանում է խանչալը և սարսափելի վէճը է հասցնում իր հակառակորդի վրէժ: Վերաւորվածն անմիջապէս ընկնում է. ասում են վէճը մահացու է: Առհասարակ վերջին տարինս անցանում սպանութիւնները սկսել են յաճախ կրկնվել:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են. «Տեղիս հայոց երկսեռ ուսումնարանների հարցաքննութիւնները սկսվեցան յուլիսի 17-ից և վերջացան յուլիսի 22-ին: Ընդհանրապէս աշակերտահիւնների պատասխանները աւելի աջող էին, քան աշակերտների: Զանազան տեղերից այստեղ ամբարանց եկած ինտելիգենտ պարսներ միշտ յաճախում էին հարցաքննութիւնները:

ԿՕՁՐՈՒՑ մեզ գրում են հետեւալը. «Ինչպէս յայտնի է, աշխարհահռչակ ուսու երաժիշտ Բուրնաշեան այս ամառը Կօջօրումն է անցկացնում: Ասում են որ նա Կօջօրը աւելի է հաւանել քան Բօրժօմը: Սակայն նա առանձնացած կիսանք է վարում, ոչ մի տեղ չէ երևում և ոչ դը նրան Կօջօրում գրասենյակ չէ տեսնում: Պատմում են որ Բուրնաշեան շատ կանոնաւոր և նոյն իսկ միակերպ կենք է վարում, նա որոշ ժամանակներին թէյ է խմում և ճաշում, ճաշից յետոյ փողը ինչ գնում է, երկնոցներ մի ժամի չափ թուղթ է խաղում իր ծանօթների հետ, այն էլ շատ չնչին դումարի վրա, և այնուհետեւ շատ վաղ անկողնի է մտնում: Ոչ ոք նրան չէ լսել պիսոս անելիս. նա փակվում է իր առանձնացած բնակարանում և այդտեղ անում կամ հեղինակում է:

ԴԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, որ այդտեղ եկած եւրօպացի հարուստ արդիւնաբերողները՝ գործարաններ են հիմնում մաս ուսուսակ յարմար (СОЛЮЖНЫЙ КОРЕНЬ) մշակելու համար: Անցեալ 1890 թվ է «Մշակի» առաջին համարներից մինի առաջնորդը յօդուածում մենք բացատրեցինք մեր ընթերցողներին մատուցակի նշանակութիւնը, մանրամասնորեն ցոյց տալով թէ ինչ տեսակ բազմակողմանի և ընդարձակ գործադրութիւն է գտնում այդ արմատը՝ քաղաքակրթ աշխարհի արդիւնաբերութեան մէջ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամիս 7-ին յօգուտ հայոց Բարեգործական ընկերութեան Շուշու ճիւղի՝ միւրդների հայերէն ներկայացում կայացաւ: Խաղացին «Ռուզան» դրաման: Աւելորդ ենք համարում խօսել այդ անախորժ պիէսայի մասին: Կարելի էր աւելի լաւ ընտրութիւն անել մեր թէյ աղքատ բեղբայրներից: Զուտ արդիւնք մնաց մօտ 250 բուրլի: Թիֆլիսի նախկին դերասանական խմբի անդամ դերասանուհի տիկին Զաքէ կեղ է Շուշի՝ մի քանի ներկայացումներ տալու համար:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ մի քանի օր է արդեն, ինչ Շուշին պատած է թանձր մշուշով թէ և յուլիս ամսումն ենք Շուշում մշուշը ոչ թէ միայն հազաւաղում է, բայց և չեղած բան է, աւելացնում է մեր թղթակիցը:

ՄԱՏԲԱՍԱՅԻՑ մեզ գրում են հետեւալը. «Պարկայիս Մարտիան (Շամախու գլուխ) շուտով կունենայ իր օրիորդաց ուսումնարանը մի գեղեցիկ կարգադրութեան նորոգելով: Այդ խնայելի կարգադրութիւնը հետեւալն է. որոշված է Մարտիանում ծախված գինու գին 20% յատկացնել հիմնկրի օրիորդաց ուսումնարանին: Եթէ աչքի առաջ ունենանք, որ 500 տուն ունեցող Մարտիան բացառապէս այդպիսի կարգադրութեան է պարագում և մեծ քանակութեամբ գինի է արտահանում, աւելացնենք և այն, որ Մարտիան յուս կարգաւոր ծախող պարտաւոր է վճարել

այդ տուրքը, ուրեմն ի՞նչ 100 բ. դնին Մարտիան մէջ անցնի երեք մարդու ձեռք, ուսումնարանը դրանից 2 բուրլու փոխանակ 6 բ. օգուտ կունենայ, իսկ որովհետեւ գիւղացին անմիջապէս չէ արտահանում գինին, այլ մի քանի անձանց ձեռն անցնելուց յետոյ է միայն արտահանվում դա, որոնցից իւրաքանչիւրը պիտի յիշեալ տուրքը վճարէ, այդպիսով ուսումնարանը 20% փոխանակ միջին թուով 30% է ստանում և յուսաւ է, որ մի քանի տարվա ընթացքում օրիորդաց ուսումնարանի գոյութիւնը կապահովվի:

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Աւերակներից նորոգող յարութիւն առնող Շամախին իր խիստ տաղակալ չղերով իր ողորմելի փոշոտ փողոցներով մի կատարեալ մոտեցումներ են ներկայացնում. մնում է առեւտուրը իր բոլոր ճիւղերով, մնում են արհեստները, մնում է նոյնպէս դրա. մով ու գրքերով հարուստ, ինչպէս շամախեցիք են անուանում, զբաղաւոր, որն երկու օրում 12 անգամ այցելուց և փակ գտնելուց յետոյ վերջապէս մի կերպ տեղեկացալ թէ՛ նա բացվում է միայն շաբաթը երեք անգամ երկնոցներ մի քանի արտոնեալ անդամների համար: Այդ երկու օրում մեր բոլոր ջանքերն իրար անցան զբաղաւորանալուսին գտնելու և զբաղաւորանալ. թեպետեմ մասին տեղեկութիւններ հաւաքելու: Ասում են, որ այդ զբաղաւորանքը 1500 բ. գուտ գրաւագրուի ունի: Միթէ այդքան փող ունենալուց յետոյ չէ կարելի մէկիւր փարձել, որ իւրաքանչիւր օր զբաղաւորանք բաց պահէ: Շամախու հասարակութիւնը դժգոհ լինելով իր զարդներից, իր երկիւղներին ուղարկում է բողոքականներին ուսումնարանը, և շատ լուսաւորչականներ էլ միջնորդութիւն են գտնում բողոքականներ ժողովարանում լսած քարոզիչներից...»

Շամախի քաղաքի բնակիչները, որպէս հաղորդում է «ԽԱՇՈՒՑ» լրագիրը, լրագրութիւն տուեցին Բազու քաղաքում ապրող շամախեցի կառուածատի Հասան-Բէկովին Պետերբուրգ դնալ և միջնորդել մինիստրութեան առաջ երկաթուղու ճիւղ անցկացնելու Նախագահ կայսրանից մինչև Շամախի քաղաքը: Այդ մի և նոյն բանի մասին, որպէս մեզ յայտնի է, երբ Ֆինանսների մինիստրը Բազու էր, շամախեցիները խմբովին խնդրեց առեւցին նրան: Հաշուած է, որ վերջինեալ ճիւղը կը նստի 1 միլիոն բուրլի: Լիազօր Հասան-Բէկով յուլիսի 17-ին դիտարկութիւն ունի ճանապարհների Պետերբուրգ:

Վրաց «Մեւրեմ» ամսագրի խմբագրութիւնից ստացանք երկու գրքիկներ վրացերէն լեզուով «Ընդհանուր անասնապահութիւն» և «Ընդհանուր երկրագործութիւն» անունով, որոնց կազմել է Մ. Զալաշվիլի: Բրօշլիները սպված են մաքուր կերպով և դները բաւական է ժամ են: Առաջին արժէ 25 կօպ, իսկ երկրորդը 20 կօպէկ:

Երէկ, երկուշաբթի, յուլիսի 15-ին, լրացաւ ուսու բանաստեղծ Մ. Լիւրմուսովի մահուան յիշատակը: Այդ դէպքը ուսու հասարակութիւնը չառաքում է ամեն տեղ հոգեհանգիստներ և հոգեհանգիստ կատարելով բանաստեղծի յիշատակը թիֆլիսում կիրակի, յուլիսի 14-ին, կատարվեցան հոգեհանգիստներ՝ Քաշվէթի եկեղեցում «Новое Обозрение» լրագրի աշխատակիցների նախաձեռնութեամբ և Զինուորական եկեղեցում «Թիֆլիսի վարժարանների ընկերութեան» նախաձեռնութեամբ: Երկու հոգեհանգիստներին էլ ներկայ էր բազմաթիւ հասարակութիւն:

Ինչպէս լուտ ենք, այսօր, երեքշաբթի, յուլիսի 16-ին, պ. Պետրոսեան ուղևորվում է Կ. Պոլիս դերասաններ վարձելու համար:

Աղաւանի մահուան քառամեակի օրվա առթիւ, կիրակի օր, յուլիսի 14-ին, Թիֆլիսի վանքի մար եկեղեցում, հայ դերասանական խմբի նախաձեռնութեամբ հոգեհանգիստ կատարվեց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՖԼԻՍ ԵՒ ԻՐ ԱՐԱՐ ՀՊԱՏԱԿՆԵՐԸ

Արտասահմանեան մի հայոց լրագրում կարգում ենք հետեւալը.

«Վերջերս մի քանի լուրեր հասան Արաբներին

կենացը, որին հետևեցին ուսուցիչ օրհներգը և ուղևորված շուրջը: Միջակայում կապակցված բնաբանը, այն համակարգվածները, որոնք կապում են ուսուցիչ և ֆրանսիական ծովապետներին և առաջարկեց ֆրանսիական նաւատորմի ծովային և նրա ընդ ներկայացուցիչներին կենացը: Միջակայում ձերբի վատարականց: Վերջինս օրից էս մի տեսակ կախարդական դարձանալի երազի մէջ էր զանալում: այնքան մեծ են Ռուսաստանում մեղ ցոյց տուած համակարգիչներ և ուշադրութիւնը, որ մենք պէտք է պարծնանք հիւրասիրութեան այդ նշաններով և մենք երջանիկ ենք նրանով, որ զրանք ոչ թէ միայն մեղ են վերաբերում, բայց և մեր սիրելի ֆրանսիային: Եւ թող մեծ և փառաւոր ուսուցիչ կայսրութիւնը ընդունի ֆրանսիայի ողջոյնը: Ապա առաջարկեցան ուսուցիչ ծովապետներին, ծովապետ ժերմէի և տան տիրուհու կենացները:

Կիւն, 14 յուլիսի: Այսօր երեք ժամին ժամանեց սերբիական թագաւորը, ուղեկցութեամբ ինամակալ Ռիտիլի, մինիստր-նախագահ Պաշիլի, հոֆմարշալ Եանկովիլի, դաստիարակ զնդապետ Միշկովիլի և սկիապի: Թագաւորին ուղեկցում է Բէլգրադի ուսուցիչ զնդապետ: Ռուսաց սահմանի վրա Ռէնիում թագաւորին զիմարեցին զենեքալ Արապով և զնդապետ Պաշկով: Կայսրանում թագաւորին զիմարեցին տեղական իշխանութիւնները, զինուորական և քաղաքացիական վարչութիւններին ներկայացուցիչները և բաղմամբիւ հասարակութիւն: Գնացքի մօտենալու ժամանակ առանցքի սերբիական ազգային օրհներգը. հասարակ, կուրբիւն հիւանդան ազգայիններով ողջունում էր թագաւորին: Կայսրանից թագաւորը գնաց Սօֆիայի տաճարը, ուր կարճատեւ մտղծանք կատարեց: Կիւն, 14 յուլիսի: Ս. Մակարի նշխարներին համբարեկուց յետոյ, այցելեց միաբնակարաններ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 14 յուլիսի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ նոր ուսումնարանական տարուց ֆիննների բոլոր զարդերում ուսուցիչ լեզուի խօսակցութեան դասեր կը մտցնեն: «Новости» լրագիրը հաղորդում է, որ երկաթուղիների վարչութիւնը առաջարկել է՝ ուսանողներին և աշակերտներին տալ հարաւորութեան չափ առանձին վագոններ, մի և նոյն ժամանակ օրիւններին պէտք է տեղաւորել կանանց բաժանմունքներում: Արձակուրդների սկիզբին և

վերջում ուսանողներին համար պէտք է անպատճառ առանձին վագոններ լինեն:

ԲԵՐԼԻՆ, 14 յուլիսի: Կայսերական համբարեկումն յայտարարված է, որ յուլիսի 23-ին (11-ին) կայսրը «Hohenzollern» նաւի տախտակածով վրա սայլաքաղցեց և թեթիւ կերպով վերաւորեց իր աջ ծոնկը. ոտը զգուշ պահել անհրաժեշտ է, որի պատճառով և կայսրը հրաժարեց իր մտադրութիւնից մօտեցաւ զբոսանքներ կատարել զէպի լեռները և զիւզական վայրերը: Կայսրի առողջութեան ընդհանուր դրութիւնը լաւ է և երկ նորին մեծութիւնը ճաշեց տախտակածով վրա զրկած ընդհանուր սեղանի վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 12-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ	92	60	կ.
Բերլինի վրա 100 մարկ	45	45	»
Փարիզի վրա 100 ֆրանկ	36	65	»
Ռուսի	արծէ	7	35
Մաքսային կուպոններ	148	»	»
Արծաթ	1	07	»
Բորսային դիսկոնտներ	3 3/4	50	»
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	104	50	»
— — — — —	2-րդ	»	»
— — — — —	3-րդ	»	»
— — — — —	4-րդ	»	»
— — — — —	5-րդ	»	»
— — — — —	6-րդ	103	37
6% ոսկեայ բնիտա	»	»	»
4% ոսկեայ փոխառութիւն	»	»	»
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	100	»	»
— — — — —	2-րդ	102	25
— — — — —	3-րդ	102	75
Ներքին 5% առաջին փոխառութ.	242	75	»
— — — — —	երկրորդ	230	50
Պետական, երկաթուղային բնիտա	104	50	»
5 1/2% բնիտա	»	»	»
4% ներքին փոխառութիւն	97	37	»
5% դրաւ. թղթ. աք. կալ. բանկի	101	25	»
5 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի	102	»	»
4 1/2% գրաւական թղթեր կալուած.	»	»	»
— — — — —	փոխ. կրեդիտ. բնիկ. մտաւ.	144	75
— — — — —	— — — — —	103	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	»	»	»
բնիկութեան օրիւնայինները	102	50	»
Մոսկույի քաղաք. օրիւնայինները	101	75	»
Օդէսայի	102	62	»
Թիֆլիսի	»	»	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի	»	»	»
— — — — —	— — — — —	»	»

Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի խնդրելու պ.պ. ամենակրթին շտապել վճարելու ներկայ տարվայ ծինելոյցներ մաքրելու համար սահմանած վճարը. մի և նոյն ժամանակ աշխատող զբոյլով թոյլ տալ այժմեանից և եթ թաղաքային մաքրողներին ծինելոյցները մաքրել. նոյնպէս մաքրողներին մօտ զանիւղ անդորրադրերի վրա նշանակել ծինելոյցներ մաքրելու մասին, որպէս զի վարչութիւնը կարողանայ հսկել մաքրողների գործունէութեան վրա: 1—1

ԳՈՅՐ և ԵՂԱՅՐ, Ժա. և Գ. կարգի ուսուցիչներ, կամենում են միասին պաշտօնաւարտել մի զարդոյում: Պայմաններով զիմել Զրиванъ, Эмину Теръ-Григоряну. 2—3

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՈՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ Աջ և փոխադարձ Ուրբաթ, 26/7 օգոստոսի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ TIGRE (ՏԻԳՐ) շողենաւը. նաւապետ NIEL (ՆԻԷԼ) զէպի Կ. Պօլիս, Մարսէլ, Հաւր, Լօնդոն, մանկով և միջանկեղ նաւահանգիստները: Ազգեսները՝ ԲԱԹՈՒՄԻՄ՝ ՄԱՍԿԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍԻՄ՝ ԳԵՐԳԻ ՀԵՋՈՒԹԵԱՆ ՀԵՋՈՒԹԵԱՆ, Իսկ ԲԱԹՈՒՄԻ Աջ՝ ԳՈՂԻՂԱՌՍԻ: 1—2

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Զ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Առեւտրողները ստանում են ատեստատ տն եր: Աւանդելի տարկայք ստեղ են՝ 1) Առեւտրական հետեւութիւն, 2) Առեւտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համընթիւ վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղադրութիւն: Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլալում, Աղէքսանդր Փրիդոնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազդորնայա փողոցների անկիւնում, զեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶԻՐԱՊԷՍ կղը. Ծովանօմբերի բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք զիմում են կուրսերի հիմնողին. — в Тифлисе, С. П. Мануэляну. 5—25 (Ե. Շ.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ВЫСОЧАЙШЕ
ТОВАРИ-
МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-
УТВЕРЖДЕННОЕ
ЩЕСТВО
ГУННО-ЛИТЕЙНОГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ
ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Чертеговыхъ, вальцовыхъ поставовъ крупосѣкъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзъкъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандсойтовъ и пасовъ. Конныхъ грабелъ «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполнение всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелезныхъ дорогъ.

Складъ локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ известной фирмы Клейтонъ и Шутлвортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРИО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

73—100 (Ե. Շ.)

Ա. ՐԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՍՍԿՎԱՅՈՒՄ

ՊԱՂԱՏԱԿԱՆ ՀԱՅԹԱՑԹՈՂՆԵՐ

— ՆՈՐՈՒԹԻՒՆ —

XX դարի
Սպիտ. եսասան
Սպիտակ եսասան
Սպիտակ եսասան
Սպիտակ եսասան
Սպիտակ եսասան
Սպիտակ եսասան
Սպիտակ եսասան

ՍԱՊՈՆՆԵՐ ԹԾԱՆԵԼԻՔ

ՎԱԶԵԼԻՆԵԱՆ ՍԱՊՈՆ—ՎԱԶԵԼԻՆԵԱՆ ՊՈՍՄԻ

Ծանոթ և ուսուցիչ կայսրութեան բոլոր քաղաքներում. ՊԵՏԱԿՈՐԱՆՏ ճիւղապետ և ուղարկվում

2—5 (1—15)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շողենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ զէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած ԵՒ ՓՈԽԱՐԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս: ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈՂԵՆԱՆԵՐԸ ԳՈՐԻՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 17/29 յուլիսի	ՄԻԿԱՍԻ	ԲՕՇԷԼ
— 31 յուլիսի (12 օգոստոսի)	ԱՆԱՏՈՒՄ	ԳԱՐԻԳ
— 14/26 օգոստոսի	ՄԻՆԳՐԵԼԻՍ	ԺԻԲՈՒՆ
— 28 օգոստոսի (9 սեպտեմբերի)	ՄԻԿԱՍԻ	ԲՕՇԷԼ

և այլն, երկուշաբթի մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ: Տօնակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից զէպի Պարիզ խական գնից պակեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճ զիմել ընկերութեան ազգեսներին. ԲԱԹՈՒՄԻՄ՝ պ. Գարանիճին, Նաբերէժնայա ԹԻՖԼԻՍԻՄ՝ պ. Վիկտոր ԳՄԻՐՈՒՆ, Միշկին-փողոցում, նախկին զենեքալ Տէր-Առաքունովի տանը, ԲԱԹՈՒՄԻ, Սամսոն Դիլլարովին, Կօլլեբիակիսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՄ՝ ՍՈՒՄ՝ պ. Լուի Րիւֆին: 4—12 (Ե. Շ.)